Հավելված 1
Սևան համայնքի ավագանու
12.02.2025թ. N1-Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 5-ԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

**Եկամուտներ**

Համայնքի 2024թ.-ի տարեկան բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 97,5%-ով /պլան՝ 3122906.9 հ.դրամ, փաստացի՝ 3044544,4 հ.դրամ/, թերակատարումը կազմել է 78,3 մլն դրամ: **Վարչական բյուջեի պլանը/ճշտված/** կազմել է 1947,9 հ. դրամ, որի դիմաց հավաքագրվել է 1968,2 հազ. դրամ, կատարվել է 101% ով , առկա է 20,3 մլն. դրամ եկամուտների գերակատարում: **Ֆոնդային բյուջեն** կատարվել է 90,3% ով /պլան 1720,0հ.դրամ ,փաստացի 1553,8 հ.դրամ/, թերակատարումը կազմել է 166,2 մլն դրամ, ինչը պայմանավորված է մեկ սուբվենցիոն ծրագրի՝ 2024թ.-ին չիրականացնելու և 2025թ. տեղափոխելով:

Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 103,6 %-ով / պլան՝ 559,3 մլն. դրամ, փաստացի՝ 579,5 մլն. դրամ/: Գերակատարումը կազմել է 20,2 մլն դրամ կամ 3,6%: Եկամտատեսակներից գերակատարվել է տեղական տուրքերը՝ 144,9%, պետական տուրքերը՝ 108,6%, հողի, գույքի վարձակալությունը՝ 193,4%, ինքնակամ կառույցների օրինականացման վճարները՝ շուրջ 10 անգամ: Թերակատարվել է ԱԳՀ հավաքագրումը, կազմել է 88,3%, տրանսպորտային միջոցների գույքահարկի հավաքագրումը կազմել է 95.3%:

**Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտներից**՝ հողի օտարումից, մուտքերը 360,0 մլն դրամ պլանի դիմաց օտարվել է 289,3 մլն. դրամի հող, կատարողականը կազմել է 80,4%, սուբվենցիոն հատկացումների կատարողականը կազմել է 96,6% /պլան 815,0 հազ. դրամ, կատարվել է 787,0 հազ. դրամ/, վարչական բյուջեի պ/ֆ-ից հատկացումներ 87,6 % / պլան 545,0 հազ. դրամ, ուղղվել է 477,4 հազ. դրամ /:

Նախորդ 2023թ.-ի տարեկան բյուջեի համեմատությամբ համայնքի բյուջեի եկամուտները ավելացել են 744,2 մլն. դրամով կամ 32,4% , այդ թվում՝ վարչական մասով 408,8 մլն դրամով /26,2%/, ֆոնդային մասով՝ 545,3 մլն. դրամով /54,1 %/: Աճը պայմանավորված է պետական բյուջեից համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիայի գումարի ավելացմամբ ՝ 394,1 մլն. դրամով /41%/, և ֆ/բ-ի 545,3 մլն. դրամ ավելացմամբ: 2024թ.-ին 2023թ.-ի համեմատ աճ է նկատվել նաև սեփական եկամուտների հետևյալ եկամտատեսակների գծով ՝

-ԱԳՀ ՝ 31,0 մլն դրամ կամ 45,5% / մասամբ 30% թանկացմամբ է պայմանավորված/

-վարձակալական վճարների աճ՝ 16,0 մլն դրամ կամ 50,4%

-աղբահանության վճարների աճ՝ 3,0 մլն. դրամ կամ 10,9%

Նշենք նաև ,որ սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը 2024թ.-ին կազմել է 579,5 հազ. դրամ՝ 2023թ.-ի 596,5 հազ. դրամի համեմատ, այսինքն 2024թ.-ին նվազել է 16,5 հազ. դրամով կամ 2,8%-ով:

Համայնքի 2024թ.-ի տարեկան բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ ավելի մանրամասն ցուցանիշները և համեմատականը 2023թ.-ի տարվա նկատմամբ արտացոլված են Հավելված 2-ում:

Համայնքի բնակավայրերի կողմից սեփական եկամուտների՝ 2024թ.-ի բյուջեի կատարման վերաբերյալ մանրամասն ցուցանիշները և համեմատականը 2023թ.-ի նկատմամբ արտացոլված են Հավելված 4-ում:

**Ծախսեր**

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի 2024թ. տարեկան բյուջեի ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել է 93,2%-ով / 3196,5 մլն. դրամ պլանային ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 2979,6 դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 216,9 մլն. դրամ կամ 6,8 %/ :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 94,8 %-ով (պլան՝ 1947,9 մլն. դրամ, փաստացի 1846,4 մլն. դրամ), թերակատարումը կազմել է 101,5 մլն. դրամ /5,2 տոկոս/: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 31,1 %-ը կամ 574,6 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 409,5 մլն.դրամ /22,2 տոկոս/՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները, 342,4 մլն. դրամ /18,5 տոկոս/՝ սանիտարական մաքրման և աղբահանության ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2024թ. տարեկան բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 100,0 % , մշակույթի ծախսերը՝ 99,88 %, սանիտարական մաքրման և աղբահանության ծախսեր 100,0 %:

2024թ. համայնքի տարեկան բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 89.8 %-ով (պլան՝ 1 793,6 մլն. դրամ, փաստացի ծախս՝ 1 610,6 մլն. դրամ/, թերակատարումը կազմել է 182,9 մլն դրամ կամ 10,2 %: Համայնքի 2024թ. ֆոնդային բյուջեից վճարվել է 1542,3 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար, ինչպես նաև նախորդ տարիներից տեղափոխված պարտքեր, որից 757,9 մլն դրամը համայնքի բյուջեի հաշվին է կատարվել, իսկ 784,4 սուբվենցիոն գումարների հաշվին, ինչպես նաև 30,1 մլն. դրամ՝ լուսավորության ցանցի վերանորոգման ծախս:

**Պարտքեր**

2024թ. հունվարի 1-ի դրությամբ վարչական բյուջեի գծով կուտակվել են միայն ընթացիկ պարտքեր, որոնք մարվել են տարվա ընթացքում: 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ֆոնդային բյուջեի գծով առկա էին շուրջ 490,4 մլն. դրամի պարտքեր, որը մարվել է 2024թ. ընթացքում:

2024թ.-ի ընթացքում ֆոնդային բյուջեի գծով պարտքեր չեն առաջացել:

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

Սևան համայնքի ավագանու 12.02.2025 N 1-Ա որոշման

## ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ 2023 Թ.-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2024թ.-ի | | | 2023 թ.- | | | 2024թ.-ի 2023թ-ի հետ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ |
| 1 | Հողի հարկ | 10000.0 | 7493.3 | 74.9 | 28043.4 | 10590.8 | 37.8 | -3097.5 | -29.2 |
| 2 | Գույքահարկ շենք-շինություններից | 10600.0 | 8045.1 | 75.9 | 8100.0 | 32596.6 | 402.4 | -24551.5 | -75.3 |
| 3 | Անշարժ գույքի հարկ /ԱԳՀ/ | 112500.0 | 99312.1 | 88.3 | 96456.6 | 68244.1 | 70.8 | 31068.0 | 45.5 |
| 4 | Գույքահարկ տրանսպորտային միջոցներից | 308688.0 | 294278.3 | 95.3 | 312299.9 | 338392.8 | 108.4 | -44114.5 | -13.0 |
| 3 | Տեղական տուրքեր | 10000.0 | 14489.7 | 144.9 | 9650.0 | 10041.9 | 104.1 | 4447.8 | 44.3 |
| 4 | Պետական տուրքեր | 13000.0 | 14124.2 | 108.6 | 13000.0 | 15259.5 | 117.4 | -1135.3 | -7.4 |
| 5 | Ընդամենը հողի, գույքի վարձակալություն | 24758.0 | 47884.2 | 193.4 | 23400.0 | 31830.5 | 136.0 | 16053.7 | 50.4 |
| 6 | Արտադպ. նախադ. ուսումն. Ծնողակ. վճարներ | 7500.0 | 7875.0 | 105.0 | 7500.0 | 8327.6 | 111.0 | -452.6 | -5.4 |
| 7 | Աղբահանության վճար | 59000.0 | 35978.3 | 61.0 | 30000.0 | 32452.4 | 108.2 | 3525.9 | 10.9 |
| 8 | Ինքնակամ կառույցների օրինական. վճարներ | 3000.0 | 36749.0 | 1225.0 | 2000.0 | 37181.9 | 1859.1 | -432.9 | -1.2 |
| 9 | Այլ մուտքեր | 240.0 | 13306.0 | 5544.2 | 1850.0 | 11177.2 | 604.2 | 2128.8 | 19.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **559286.0** | **579535.2** | **103.6** | **532299.9** | **596095.3** | **112.0** | **-16560.1** | **-2.8** |
| | ՊԱՇՏ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ /ԴՈՏԱՑԻԱ, ՍՈՒԲՎԵՆՑԻԱ/ | 1355089.9 | 1355089.9 | 100.0 | 980963.5 | 960963.5 | 98.0 | 394126.4 | 41.0 |
| | նպատակային հատկացում | 31303.8 | 31303.8 | 100.0 | | | | 31303.8 | |
| | ՔԿԱԳ բաժնի պահպանման գծով եկամուտներ | 2227.2 | 2227.2 | 100.0 | 2227.2 | 2227.2 | 100.0 | 0.0 | 0.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **1947906.9** | **1968156.1** | **101.0** | **1515490.6** | **1559286.0** | **102.9** | **408870.1** | **26.2** |
| 1 | Հողի, գույքի, հիմ. միջոց. օտարումից մուտքեր | 360000.0 | 289328.0 | 80.4 | 370000.0 | 422528.0 | 114.2 | -133200.0 | -31.5 |
| 2 | Կապիտալ սուբվենցիա | 815000.0 | 787060.3 | 96.6 | 512000.0 | 318514.0 | 62.2 | 468546.3 | 147.1 |
| 3 | Վարչ. բյուջեի պահ. ֆոնդից հատ. ֆոնդ. Բյուջե | 545000.0 | 477400.0 | 87.6 | 274196.8 | 267405.5 | 97.5 | 209994.5 | 78.5 |
| 4 | Այլ մուտքեր | 0.0 | | | 0 | 0 | #ДЕЛ/0! | 0.0 | #ДЕЛ/0! |
| 5 | **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **1720000.0** | **1553788.3** | **90.3** | **1156196.8** | **1008447.5** | **87.2** | **545340.8** | **54.1** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ** | **3122906.9** | **3044544.4** | **97.5** | **2397490.6** | **2300328.0** | **95.9** | **744216.4** | **32.4** |

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

Սևան համայնքի ավագանու՝ 12.02.2025 N 1-Ա որոշման

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ 2023Թ.-Ի ՆԿԱՏՄԱՄԲ

ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | 2024 թ. | | | 2023 թ. | | | 2024թ.-ի ՀԱՄԵՄ. 2023թ.-ի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍ | ՊԼԱՆ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍ |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրա. ծառայություններ | 418624.6 | 409544.7 | 97.8 | 368768.8 | 367682.1 | 99.7 | 41862.6 | 11.4 |
| 2 | Տնտեսական հարաբերություններ | 5000.0 | | 0.0 | 2160.0 | 1000.0 | 46.3 | -1000.0 | -100.0 |
| 3 | Շրջակա միջավայրի պաշտպանություն | 343981.0 | 342402.1 | 99.5 | 258245.6 | 258240.0 | 100.0 | 84162.1 | 32.6 |
| 4 | Բնակարան.տնտեսություն | 8000.0 | 7312.8 | 91.4 | 3300.0 | 3297.9 | 99.9 | 4014.9 | 121.7 |
| 3 | Մշակույթի գծով ծախսեր | 77588.4 | 68943.7 | 88.9 | 63804.0 | 63706.5 | 99.8 | 5237.2 | 8.2 |
| 4 | Կրթության գծով ծախսեր | 514173.2 | 505721.3 | 98.4 | 486225.5 | 486139 | 100.0 | 19582.3 | 4.0 |
| 5 | Սոցիալական պաշտպանութուն | 25592.0 | 25340.9 | 99.0 | 15769.0 | 15757 | 99.9 | 9583.9 | 60.8 |
| 6 | Վ/Բ պահ.ֆոնդից հատկացում Ֆ/Բ | 545000.0 | 477400.0 | 87.6 | 274196.8 | 267405.5 | 97.5 | 209994.5 | 78.5 |
| 7 | Այլ ծախսեր | 9948.1 | 9696.2 | 97.5 | 43020.9 | 43020.9 | 100.0 | -33324.7 | -77.5 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ** | **1947907.3** | **1846361.7** | 94.8 | **1515490.6** | **1506248.9** | 99.4 | 340112.8 | 22.6 |
| 1 | Համայնքի ղեկավ. աշխատ. պահպ. ծախսեր | 6637.1 | 5140.9 | 77.5 | 5302.1 | 1678.6 | 31.7 | 3462.3 | 206.3 |
| 2 | Ընդհ. բնույթի համայնքային ծառայություններ | 177517.6 | 33060.8 | 18.6 | 20310.4 | 5159.3 | 25.4 | 27901.5 | 540.8 |
| 3 | Տնտեսական հարաբ. /ճանապ. տնտեսություն/ | 1578482.3 | 757920.2 | 48.0 | 1190196.8 | 1043175.7 | 87.6 | -285255.5 | -27.3 |
| 4 | Փողոցների լուսավորման ցանցի կառուցում | 31000.0 | 30130.0 | 97.2 | 3000.0 | 1361.3 | 45.4 | 28768.7 | 2113.3 |
| 5 | Կրթության գծով ծախսեր | | | | 2689.6 | 2689.6 | 100.0 | -2689.6 | -100.0 |
| 6 | Բնակարանային տնտեսություն | | | | | | | 0.0 | |
| 7 | Մշակույթի գծով ծախսեր | | | | | | | 0.0 | |
| | Այլ ծախսեր/ ասֆալտբետոնյա ծածկույթ/ | | 784410.3 | | | | | 784410.3 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **1793637.0** | **1610662.2** | 89.8 | **1221498.9** | **1054064.5** | 86.3 | 556597.7 | 52.8 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ** | **3196544.3** | **2979623.9** | 93.2 | **2736989.5** | **2560313.4** | 93.5 | 419310.5 | 16.4 |

Հավելված N 4

Սևան համայնքի ավագանու՝ 12.02.2025 N1-Ա որոշման

# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հազար դրամներով

| Հ/Հ | ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2024թ. | | | 2023 թ. | | | 2024թ. 2023թ.-ի նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՊԼԱՆԸ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍԸ | ՊԼԱՆԸ | ՓԱՍՏԱՑԻ | ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏՈԿՈՍԸ | ՓԱՍՏԱՑԻ | ՏՈԿՈՍՈՎ |
| 1 | ՍԵՎԱՆ | 350776.1 | 405796.2 | 115.7 | 393109.9 | 393766.5 | 100.2 | 12029.7 | 3.1 |
| 2 | ՉԿԱԼՈՎԿԱ | 13012.9 | 8321.4 | 63.9 | 8650.0 | 10068.6 | 116.4 | -1747.2 | -17.4 |
| 3 | ՎԱՐՍԵՐ | 23305.5 | 20281.8 | 87.0 | 15900.0 | 18742.8 | 117.9 | 1539.0 | 8.2 |
| 4 | ՆՈՐԱՇԵՆ | 6606.5 | 4272.7 | 64.7 | 3240.0 | 4765.1 | 147.1 | -492.4 | -10.3 |
| 5 | ԳԵՂԱՄԱՎԱՆ | 22345.9 | 16102.7 | 72.1 | 15830.0 | 17514.2 | 110.6 | -1411.5 | -8.1 |
| 6 | ԴԴՄԱՇԵՆ | 26557.8 | 23125.5 | 87.1 | 17450.0 | 23059.1 | 132.1 | 66.4 | 0.3 |
| 7 | ՍԵՄՅՈՆՈՎԿԱ | 4844.0 | 1759.1 | 36.3 | 3460.0 | 3589.8 | 103.8 | -1830.7 | -51.0 |
| 8 | ԾԱՂԿՈՒՆՔ | 16351.6 | 13706 | 83.8 | 11860.0 | 19167.6 | 161.6 | -5461.6 | -28.5 |
| 9 | ԾՈՎԱԳՅՈՒՂ | 48468.5 | 44084.2 | 91.0 | 29810.0 | 62153.7 | 208.5 | -18069.5 | -29.1 |
| 10 | ԼՃԱՇԵՆ | 33907.5 | 29175.8 | 86.0 | 24550.0 | 31305.3 | 127.5 | -2129.5 | -6.8 |
| 11 | ՁՈՎԱԲԵՐ | 13109.8 | 12909.2 | 98.5 | 8440.0 | 11962.6 | 141.7 | 946.6 | 7.9 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **559286.1** | **579534.6** | **103.6** | **532299.9** | **596095.3** | **112.0** | **-16560.7** | **-2.8** |